ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER
FOR WOMEN WITH DISABILITIES

Coalition for Inclusive
Legal Reforms

ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
TOWARDS INCLUSIVE
ARMENIA

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ ճիշտ հաղորդակցություն

Սույն ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում և ծանոթացնում է տեսողության խնդիրներ ունեցող և չտեսնող անձանց հետ ճիշտ աջակցելու էթիկային և կանոններին:

Այս ուղեցույցի նպատակն է նպաստել տեսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցելու հիմնական սկզբունքների վերաբերյալ մարդկանց իրազեկվածության բարձրացմանը:

Ծրագիրն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Ովքեր են համարվում տեսողության խնդիրներ ունեցող անձինք .....3
2. Տեսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցող միջոցները.....4
3. Բառապաշար և հաղորդակցման էթիկա .....5
4. Տեսողության խնդիրներ ունեցող անձանց ուղեկցելու և վարվելակերպի ընդհանուր կանոններ և էթիկա .....7
5. Չտեսնող անձանց ուղեկցելու ընդհանուր կանոններ .....14
6. Ինչպես աջակցել տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմնորոշվել բաց և փակ միջավայրերում և ծանոթանալ շրջապատին .....16
7. Աջակցություն կանգառում կամ տրանսպորտային միջոցներից օգտվելիս ....18
8. Աջակցություն սեղանի շուրջ .....20
9. Տեսողության խնդիրներ ունեցող անձին անձնական բնույթի տեղեկատվություն տրամադրելու էթիկա .....23
10. Աջակցություն գնումներ կատարելիս .....24

# Ովքեր են համարվում տեսողության խնդիրներ ունեցող անձինք

Տեսողության խնդիրներ ունեցող են համարվում այն անձինք, ովքեր աչքի տարատեսակ խնդիրների հետևանքով ունեն տեսողության մասնակի կամ ամբողջական կորուստ:

Տեսողության խնդիրները ֆիզիկական հաշմանդամության ամենատարածված տեսակներից են:

Ինչպես հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, տեսողության խնդիրներ ունեցողները ևս բախվում են միջավայրային արգելքների, օրինակ՝ ֆիզիկական անմատչելիություն, խտրական վերաբերմունք, տեղեկատվության անմատչելիություն և այլն:

Ըստ 2022թ. տարեվերջի տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում տեսողական խնդիրներով պայմանավորված առաջին կարգի հաշմանդամություն ունի 1573 անձ, երկրորդ կարգի հաշմանդամություն ունի 3375 անձ և երրորդ կարգի հաշմանդամություն ունի 11042 անձ, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 485 է:

Ընդհանուր առմամբ՝ տեսողության խնդիր ունեցողների թիվը ՀՀ-ում 16,475 է, որոնցից 6843-ը աղջիկներ և կանայք են:

# Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հիմնական աջակցող միջոցները

Տեսողության խնդիրներ ունեցող անձինք կարող են գործածել տարատեսակ ակնոցներ և խոշորացույցներ, իսկ մի մասը կարող է տեղաշարժվել սպիտակ ձեռնափայտով: Նրանք կարող են տեղաշարժվել նաև ուղեկցողի աջակցությամբ:

Չզարմանաք, եթե տեսողության խնդիրներ ունեցող անձի ձեռքին տեսնեք հեռախոս, որը խոսում է. տեսողության խնդիրներ ունեցող անձինք գործածում են էկրանի հատուկ ընթերցիչներ, որոնք, տեքստը ձայնի վերածելով, տեղեկատվություն են փոխանցում նրանց:

Կան նաև բազմաթիվ այլ աջակցող սարքեր, որոնք տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմից գործածվում են. գրելիս (բրայլյան գրիչ-գրասարք, տողեր՝ գրելու և ստորագրելու համար), տարածության մեջ կողմնորոշվելիս (խոչընդոտների մասին տեղեկացնող սարքեր և հեռախոսային հավելվածներ), կենցաղում (գույները, բաժակի լիությունը որոշող սարքեր) և այլն:

Տեսողության խնդիրներ ունեցող անձինք նաև կարող են տեղաշարժվել ուղեկցող շների աջակցությամբ, սակայն այս մշակույթը մեր երկրում դեռևս տարածված չէ ծառայողական շների բացակայության, մեր երկրում դրանց անհասանելիության և այլ պատճառներով:

# Բառապաշար և հաղորդակցման էթիկա

Տեսողության խնդիրներ ունեցող և չտեսնող անձանց հետ հաղորդակցվելիս պետք է ուշադրություն դարձնել նրանց կողմից ընդունելի արտահայտությունների և բառերի ընտրությանը:

Բացի վիրավորական լինելուց՝ ընտրված բառերը և արտահայտությունները կարող են որոշակի վերաբերմունք ձևավորել և ստեղծել կարծրատիպեր:

Անհրաժեշտ է ընտրել այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք կարող են առաջացնել հնարավորինս քիչ էմոցիաներ կամ խղճահարություն և չեն ստեղծի կարծրատիպեր:

Տեսողության խնդիրներ ունեցող կամ չտեսնող անձի մասին կամ նրա հետ զրուցելիս մի՛ ասեք.

- **Աչքերից հիվանդ**
- **Աչքերից խեղճ**
- **Աչքերից ինվալիդ**
- **Աչքերից հաշմանդամ**
- **Տեսողությունից խեղճ**
- **Կույր (էն կույրին բերեք՛ նստացրեք) և այլ նմանատիպ արտահայություններ:**

**Հիշ՛եք,** որ տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ հաղորդակցվելու հիմնական սկզբունքը նրանց անձի և արժանապատվության հանդեպ հարգանքն է, ինչպես նաև նրանց հետ հաղորդակցվելիս միանգամից նրանց տեսողության խնդրի կամ բացակայության վրա չկենտրոնանալը և անհարգալից հարցեր չտալը (բա ի՞նչ է եղել, բա ե՞րբ է եղել, բա ինչպե՞ս է եղել և այլն): Կարող եք այդ հարցերն ուղղել տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ որոշակի մտերմության հաստատումից և նրանցից թույլտվություն խնդրելուց հետո:

Խնդրում ենք հիշել, որ ձեզ անծանոթ տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ շփվելիս անհրաժեշտ է նրանց դիմել «Դուք»-ով:

# Տեսողության խնդիրներ ունեցող անձանց ուղեկցելու և վարվելակերպի ընդհանուր կանոններ և էթիկա

Նախքան ընդհանուր կանոններին անցնելը՝ ցանկանում ենք հիշեցնել, որ տեսողության խնդիրներ ասելով նկատի ենք ունենալու թե՛ մասնակի տեսողություն ունեցող, թե՛ չտեսնող անձանց:

## Ընդհանուր կանոններ

1. **Երբ միասին որևէ խմբում եք, արեք լավագույնը, որ տեսողության խնդիրներ ունեցող անձը չառանձնանա շրջապատից:**
2. **Մի՛ մոռացեք, որ տեսողության խնդիրներ ունեցող անձանց տրամադրությունը շատ դեպքերում կախված է միջավայրում նրանց ընդունելությունից և ներառումից:**
3. **Երբ տեսողության խնդիր ունեցող անձի հետ եք, աշխատեք «չցուցադրել» նրան և բոլորի ուշադրությունը մի հրավիրեք նրա վրա:**

4. Երբ չտեսնող անձին ներկայացնում եք որևէ տեսնողի, անհրաժեշտ է բանավոր տալ տեղեկություն, թե որ կողմում (աջ, ձախ, դիմաց և այլն) է գտնվում այն մարդը, ում հետ պետք է ծանոթանա չտեսնող անձը:

5. Չտեսնող անձին հանդիպելիս՝ առանց ներկայանալու մի՛ հարցրեք, թե արդյոք նա ճանաչեց Ձեզ: Նրա հետ ոչ հաճախակի հանդիպումների դեպքում անհրաժեշտ է բարևելուց հետո միանգամից ներկայանալ:

6. Զրուցելու ընթացքում ուշադրություն դարձրեք Ձեր ձայնի տոնայնությանը, մի՛ փորձեք խոսել բարձր, խոսե՛ք սահուն, հանգիստ և անշտապ:

7. Չտեսնողների հետ խոսելիս հանգիստ կիրառեք այն բառերը, որոնք գործածում եք տեսնողների հետ զրուցելու ժամանակ (տեսնել, դիտել, նայել և այլն, «Դուք այդ ֆիլմը դիտե՞լ եք», «Դուք հեռուստացույցով այդ հաղորդումը նայե՞լ եք»):

8. Չտեսնողների հետ զրուցելիս խուսափեք նման արտահայտություններից, ինչպիսիք են՝ «շոշափեք», «ես կտանեմ Ձեզ» և այլն: Դրանց փոխարեն հանգիստ գործածեք «վերցրեք, նայեք», «ես Ձեզ կուղեկցեմ» արտահայտությունները:

9. Երբ տեսողության խնդիրներ ունեցող անձի հետ եք, խուսափեք մի երրորդ անձի ժեստերով տեղեկատվություն փոխանցելուց: Տեղեկատվության գաղտնի փոխանցումը մեկ այլ մարդու կարող է վիրավորական լինել տեսողության խնդիրներ ունեցող անձի համար: Եթե անգամ կարիք է եղել ժեստերով խոսելու երրորդ անձի հետ, ապա անպայման հակիրճ ներկայացրեք տեսողության խնդիրներ ունեցող Ձեր ուղեկցին, թե ինչ իրադրություն էր և ինչ տեղեկատվություն էիք փոխանցում դիմացինին:

10. Թույլ մի՛ տվեք, որ տեսողության խնդիրներ ունեցող անձը իրեն զգա ձեզնից կախման մեջ: Վերաբերվեք նրան՝ ինչպես հավասարը հավասարին և ընդունեք, որ Դուք միայն նրան որոշակի հարցերում աջակցողի դերում եք:

11. Երբ չտեսնող անձի հետ գտնվում եք աղմկոտ վայրում, նրա կողքից հեռանալու պարագայում անպայման տեղյակ պահեք այդ մասին: Նա կարող է չնկատել, որ հեռացել եք, և կշարունակի զրույցը: Իսկ երբ նկատի, որ չկաք, կանհանգստանա: Վերադառնալուն պես զգուշացրեք, որ արդեն վերադարձել եք:

12. Եթե մենակ եք թողնում չտեսնող անձին սենյակում, հարցրեք նրան, թե պե՞տք է արդյոք անջատել կամ վառել լույսը:
13. Անհրաժեշտության դեպքում օգնեք չտեսնող անձին խորհուրդներով՝ կեցվածքի, արտաքին տեսքի, ակնոցի հետ կապված: Եթե կհայտնաբերեք նրա հագուստի հետ կապված որևէ խնդիր, մի՛ ամաչեք, և նրա ուշադրությունը նրբանկատ կերպով կենտրոնացրեք դրա վրա: Հավատացեք, որ եթե նրբանկատ կերպով կատարեք դա, ապա չափազանց օգնած կլինեք նրան:
14. Եթե չտեսնող անձը խնդրում է Ձեզ նկարագրել որևէ մեկի արտաքինը, փորձեք անել այդ հնարավորինս ճշգրիտ և անկողմնակալ կերպով:
15. Նկատի ունեցեք, որ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար խիստ կարևոր է կարգուկանոնը՝ ինչպես աշխատանքային սեղանին, այնպես էլ ընդհանուր տարածքում: Այն իրերը, որոնցից օգտվում է տեսողության խնդիրներ ունեցող անձը, միշտ պետք է լինեն նույն տեղում, փոփոխության դեպքում էլ անհրաժեշտ է տեղեկացնել նրանց այդ մասին և ծանոթացնել կատարված փոփոխություններին:
16. Մի՛ թողեք մուտքերի մոտ սայլակներ, արկղեր և այլ իրեր, որոնք կխանգարեն չտեսնող անձանց կողմնորոշմանը և անվնաս տեղաշարժմանը:

17. Այն հաստատություններում, որտեղ գտնվում են տեսողության խնդիրներ ունեցող անձինք, կիսաբաց մի՛ թողեք դռները և պատուհանները: Դրանք պետք է լինեն կամ ամբողջությամբ բաց, կամ՝ փակ վիճակում:

18. Եթե Ձեր և չտեսնող անձի միջև հեռավորությունը մեծ է և անհրաժեշտ է տեղեկատվություն հաղորդել նրան, պետք է ճիշտ և հստակ ասել, թե որ կողմ պետք է նա թեքվի կամ գնա: Տեղեկատվությունը հաղորդեք ոչ թե ելնելով Ձեր, այլ հենց չտեսնողի մարմնի դիրքից:

19. Եթե ցանկանում եք օգնել չտեսնող անձին, երբեք միանգամից և անսպասելի մի՛ բռնեք նրա ձեռքը. Կարող եք վախեցնել նրան: Սկզբից անհրաժեշտ է խոսել, ապա՝ դիպչել նրան (եթե դա խիստ անհրաժեշտ է այդ պահին, օրինակ՝ սպասվող վտանգի պարագայում):

20. Տեսնողը սկզբից պետք է հարցնի չտեսնողին, թե անհրաժեշտ է արդյո՞ք իր աջակցությունը նրան: Դրական պատասխանի դեպքում միայն աջակցություն ցուցաբերի՝ չտեսնողի ցուցումների համաձայն: Ձեր աջակցության առաջարկին մերժում ստանալու դեպքում մի՛ վիրավորվեք, հասկացեք, որ պարզապես այդ պահին նա աջակցության

կարիք չունի և նախընտրում է ինքնուրույն տեղաշարժվել (խոսքը չի վերաբերում ծայրահեղ դեպքերին, երբ չտեսնող անձին վտանգ է սպառնում: Այդ պարագայում պետք է զուտ զգուշացնել, որ Դուք ցանկանում եք ապահովել նրա անվտանգությունը):

21. Աջակցություն առաջարկելիս կամ հարց տալիս չտեսնող անձը պետք է հասկանա, որ դիմում եք հենց իրեն: Օրինակ պետք չէ վերացական, ոչ պատշաճ հեռավորությունից դիմել՝ ասելով. «ի՞նչ է պետք», «ու՞ր եք գնում», «անցեք»: Փոխարենը նախ պետք է պատշաճ տարածությամբ մոտենալ, բարևել, առաջարկել օգնություն, այսինքն՝ հաղորդակցման մեջ մտնել նրա հետ, ապա առաջարկել աջակցությունը կամ տալ հարցը:

22. Չտեսնողի հետ քայլելիս, երբ հանդիպում եք որևէ ծանոթի, մի՛ բարևեք միայն գլխի շարժումով, այլ նաև բարձրաձայն:

23. Երբ Ձեզ մոտենում են մարդիկ, նախազգուշացրեք չտեսնողին: Միգուցե նա չցանկանա առաջինը իր ձեռքը մեկնել: Իսկ երբ որևէ մեկը ձեռք է մեկնել նրան, ոչ թե ձեռքը մեկնողին ասեք, որ Ձեր ընկերը չի տեսնում, այլ Ձեր չտեսնող ընկերոջը ասեք, որ ուզում են ձեռքսեղմամբ ողջունել նրան:

24. Եթե մեկնել եք Ձեր ձեռքը չտեսնող անձին բարևելու համար, խոսքով տեղեկացրեք նրան այդ մասին՝ «Ես ձեռքս մեկնել եմ Ձեզ բարևելու համար»:

25. Ուղեկցողը երբեք չպետք է պատասխանի չտեսնող անձին ուղղված հարցերին: Դա շատ վիրավորական կարող է լինել:

26. Մտնելով որևէ հաստատություն՝ ուղեկցողը պետք է տեղեկություն հաղորդի այդտեղ գտնվող անձանց և տարածքի մասին:

27. Խմբում զրուցելիս, չտեսնողին դիմելու պարագայում, բարձրաձայնեք նրա անունը, որպեսզի նա իմանա, որ իրեն է ուղղված հարցը: Նաև այս կանոնի մասին հուշեք խմբի այլ անդամներին:

# Չտեսնող անձանց ուղեկցելու ընդհանուր կանոններ

1. Չտեսնող անձին պետք է ուղեկցել իրեն հարմար տարբերակով՝ հարցնելով իրեն հարմար տարբերակի մասին: Լավ կլինի, որ ուղեկցողը քայլի այն կողմով, որտեղ խոչընդոտներ (սյուներ, փոսեր և այլ անհարմարություններ) են առկա:

2. Քայլելու ընթացքում երբեք չի կարելի չտեսնող անձին հրել Ձեզանից առաջ:

3. Ուղեկցելու ժամանակ չտեսնող անձը պետք է բռնի տեսնողի արմունկից, որպեսզի լինի նրանից կես քայլ հետ, ուղորդվի ուղեկցողի քայլերով՝ զգալով նրա թեքումները, տարածության մեջ շարժումները, վերելքները աստիճաններով կամ վայրէջքները:

4. Չտեսնող անձի հետ քայլելիս չպետք է կատարել կտրուկ շարժումներ, կտրուկ կերպով փոխել ճանապարհը, կտրուկ հետ, վեր կամ վար քաշել նրա ձեռքը և այլն:

5. Աստիճաններ բարձրանալիս կամ իջնելիս հարցրեք չտեսնող անձին, թե նա արդյո՞ք կարիք ունի բարզրիքներից բռնվելու, թե՞ հարմար է շարունակել ճանապարհը ուղեկցման նույն կանոններով:

6. Միայնակ մի՛ թողեք չտեսնող անձին փողոցի բանուկ հատվածում կամ բաց դռների մոտ: Միայնակ թողնելուց առաջ ուղեկցեք նրան ապահով վայր:

7. Հիշե՛ք, որ լավ ուղեկցողը ոչ միայն ապահովում է չտեսնող անձի անվտանգությունը, այլև տեղեկացնում է նրան, թե ինչ է կատարվում շրջապատում և տեղեկություններ հաղորդում շրջապատի մասին:

8. Չտեսնողի հետ քայլելիս ձեռքերը մի՛ խաչեք Ձեր հետևում: Նրա համար անհարմար կլինի այդ:

9. Երբ քայլում եք չտեսնող անձի հետ և կրում եք մեծ պայուսակ, այնպես արեք, որ այն լինի ոչ թե նրաև և Ձեր միջև, այլ՝ հակառակ կողմում, որպեսզի չխանգարի նրան:

# Ինչպես աջակցել տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմնորոշվել բաց և փակ միջավայրերում և ծանոթանալ շրջապատին

1. Լավ կլինի, որ շրջապատի մասին տեղեկատվություն հաղորդելիս տեսնողը փորձի տարբերել առաջնային և երկրորդային անհրաժեշտության տեղեկությունները և ապա ճշգրտորեն հայտնի: Մեծամասամբ չտեսնողներին չի հետաքրքրում մանրամասն տրված տեղեկատվությունը շրջապատի մասին: Ավելի շատ պատասխանեք այն հարցերին, որ կտա չտեսնող անձը:

2. Պատմելիս պետք չէ խուսափել գույների ներկայացումից: Տեսողությունը ուշ կորցրած անձինք պատկերացում ունեն գույների մասին, իսկ ի ծնե չտեսնողներին կարելի է բացատրել բնության օրինակով՝ օրինակ խոտի նման կանաչ, ձյան պես սպիտակ, ծովի պես կապույտ և այլն:

3. Անհրաժեշտ է տեսողության խնդիրներ ունեցող անձանց ներկայացնել շրջակա միջավայրի փոփոխությունների (կահույքի, փակ փողոցների,

բաց դիտահորերի, տարածքում կատարվող շինարարական աշխատանքների, լուսացույցների անսարքության, և այլ խոչընդոտների մասին):

4. Չտեսնողները դժվարությամբ են ինքնուրույն կողմնորոշվում անծրևոտ եղանակին, ձյան դեպքում, աղմկոտ միջավայրում: Այդ պայմաններում անպայման առաջարկեք Ձեր օգնությունը:

5. Նոր միջավայրում անհրաժեշտ է չտեսնողին ցույց տալ զուգարանի տեղը: Դուք կարող եք հարցնել նրան՝ ունի՞ զուգարանի կառուցվածքին ծանոթանալու կարիք: Եթե հակառակ սեռի ներկայացուցիչ եք և/կամ Ձեզ համար դա դժվար է, դիմեք մեկին, ով այդ հարցում կօգնի նրան:

6. Չտեսնող անձին պետք է ծանոթացնել պետքարանի կահավորվածությանը: Ասել, թե որտեղ է զուգարանակոնքը, որտեղ է գտնվում զուգարանի թուղթը, որտեղ պետք է սեղմել ջուրը քաշելու համար, ցույց տալ լվացարանի, օճառի, սրբիչի կամ ձեռքերը չորացնելու սարքի տեղը:

7. Նոր միջավայրում գտնվելիս պետք է ծանոթացնել նաև լոգարանին: Ասել, թե որտեղ է գտնվում լոգախցիկը, ցույց տալ տաք և սառը ջրի փականները, կախիչները և հիգիենայի պարագաները:

8. Եթե չտեսնող անձին ծանոթացնում եք որևէ առարկայի, ապա նրա ձեռքը պետք է զգուշորեն հպել առարկային և ստեղծել այնպիսի պայմաններ, որ չտեսնող անձը հանգիստ կարողանա շոշափել այն:

## Աջակցություն կանգառում կամ տրանսպորտային միջոցներից օգտվելիս

1. Երբ կանգառում հանդիպում եք չտեսնող անձի, հարցրեք, թե արդյոք կարիք ունի՞ ավտոբուսի համարներին տեղեկանալու (գուցե նա ընդամենը որևէ մեկին է սպասում և դրա կարիքը չունի):

2. Եթե պարզում եք, որ նա սպասում է որևէ համարի ավտոբուսի, մոտենալուն պես զգուշացրեք նրան այդ մասին, ապա օգնեք նրան մոտենալ անհրաժեշտ տրանսպորտային միջոցի բացված դռներին:

3. Եթե կա բավարար ժամանակ կամ, եթե Դուք ևս երթևեկելու եք նույն տրանսպորտային միջոցով, այդ դեպքում ուղեկցման ընդհանուր կանոնների համաձայն օգնեք նրան բարձրանալ և գտնել ազատ նստելատեղ: Ազատ տեղ գտնելուց հետո նրա ձեռքը դրեք դրա հենակին:

4. Չտեսնող անձի հետ տրանսպորտ բարձրանալուց հետո, ազատ նստելատեղ չլինելու դեպքում, նրա ձեռքը դրեք մոտակա բռնածողին:

5. Տաքսի նստելու պարագայում հարցրեք, թե ո՞ր մասում է ցանկանում նստել՝ առջևու՞մ, թե՞ հետնամասում:

6. Մեքենա նստելիս չտեսնող անձին օգնելու համար նրա աջ ձեռքը դրեք բացված դռան վրա: Ձախ ձեռքը՝ մեքենայի վերնամասին, որտեղ դուռը հակվում է շրջանակին, որպեսզի նա իմանա, թե ինչքան պետք է իջեցնի գլուխը և անվտանգ նստի մեքենան:

# Աջակցություն սեղանի շուրջ

1. Անհրաժեշտ է տեղեկություն տալ չտեսնողին, թե ինչ ուտեստներ կան սեղանին, որպեսզի նա ընտրի իր ցանկացած ուտեստը և ոչ թե հարցնել՝ «ի՞նչ կուզեք». հավատացեք, որ առանց իմանալու, թե ինչ ուտեստներ կան սեղանին, դժվար կլինի ընտրություն կատարել:

2. Առանց իմանալու չտեսնողի սննդային նախընտրությունները՝ մի լցրեք որևէ ուտելիք նրա ափսեն:

3. Սեղանի շուրջ նստած ժամանակ չպետք է սպասքի պարագաները դնել չտեսնող անձի ձեռքի մեջ: Ուղղակի պետք է տեղեկացնել նրան, թե որ կողմում են դրված դրանք: Օրինակ՝ դանակը աջ կողմում է, պատառաքաղը՝ ձախ: Սեղանից օգտվելու համար չտեսնողների համար մշակված է ժամացույցի մեթոդը:

4. Կարող եք չտեսնողին ուսուցանել ժամացույցի մեթոդը, որի պարագայում ափսեի ներքին մասը ժամը 6-ն է, ժամը 12-ը ափսեի

վերնամասն է, ժամը 3-ն աջ և 9-ը ձախ մասերն են: Այս նույն մեթոդով կարող եք դասավորել սեղանը. Ժամը 12-ի ուղղությամբ դնել հացը, 1-ի ուղղությամբ՝ պանիրը, 3-ի վրա անձեռոցիկը և այդպես շարունակ: Այս մեթոդը գործածելուց առաջ պետք է համոզվել, թե չտեսնող անձը տիրապետո՞ւմ է ժամացույցի կառուցվածքին: Եթե ոչ, կարելի է ուսուցանել նրան ժամացույցի վրա՝ բացատրելով թվերի և սլաքների տեղակայվածությունը:

5. Սրճարանում կամ ռեստորանում չտեսնողի համար անպայման կարդացեք ճաշացանկը:

6. Ճաշելիս հարցրեք չտեսնողին, թե տվյալ ուտեստն ուտելու համար նրան սպասքի ի՞նչ պարագա է հարմար՝ գդա՞լ, պատառաքա՞ղ, թե՞ մեկ այլ պարագա:

7. Նրան հարցրեք, թե ինչ է ցանկանում խմել, իսկ բաժակը լցնելուց հետո դրեք այն նույն տեղում: Ընթացքում բաժակը լցնելու պարագայում ևս զգուշացրեք այդ մասին:

8. Եթե նկատում եք չտեսնողի ձեռքում որևէ իր, որը նրան տվյալ պահին այլևս պետք չէ, տեղեկություն հաղորդեք, թե որտեղ կարող է դնել այն, իսկ անհրաժեշտության դեպքում, եթե նա դիմում է Ձեզ այդ անելու համար, վերցրեք նրա ձեռքից:

9. Եթե ափսեի մեջ կա օրինակ մսի մեծ կտոր կամ ուտեստն ամբողջական է և ունի կտրատման կարիք, ապա հարցրեք չտեսնողին, թե անհրաժեշտ է մանրացնել այն: Համաձայնություն ստանալուց հետո մանրացրեք այն այնպիսի կտորների, որ հարմար լինի ուտելու համար:

10. Եթե չտեսնողը ծխող է, ապա անպայման ցույց տվեք մոխրամանը և ոչ մի դեպքում առանց զգուշացման մի՛ տեղափոխեք այն: Անհրաժեշտության դեպքում նրան տրամադրեք առանձին մոխրաման:

# Տեսողության խնդիրներ ունեցող անձին անձնական բնույթի տեղեկատվություն տրամադրելու էթիկա

1. Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար որևէ բան կարդալիս չպետք է բաց թողնել տողեր և բառեր: Եթե դրա անհրաժեշտությունը լինի, նրանք Ձեզ կզգուշացնեն այդ մասին:

2. Նամակ կամ փաստաթուղթ կարդալուց առաջ, տվե՛ք դա նրան:

3. Նամակ կարդալուց առաջ առաջին հերթին անհրաժեշտ է կարդալ ուղարկողի անունը, հասցեն կամ հաստատության անվանումը, ապա, չտեսնող անձի թույլտվությունից հետո, շարունակել կարդալ բովանդակությունը:

4. Եթե չտեսնողը թույլ չի տալիս շարունակել կարդալը, պետք է դադարեցնել նույնիսկ մտովի ընթերցանությունը և միանգամից չտեսնողին հանձնել նամակը կամ փաստաթուղթը:

5. Եթե չտեսնողը Ձեզ խնդրել է կարդալ անձնական բնույթի որևէ նամակ, Դուք պարտադիր պետք է պահեք դրա գաղտնիությունը:

# Աջակցություն գնումներ կատարելիս

1. **Խանութից գնումներ կատարելիս չտեսնողին անշտապ ընտրություն կատարելու, նայելու, հագուստի պարագայում՝ փորձելու հնարավորություն տվեք:**

2. **Հնարավորինս մանրամասն նկարագրեք հագուստը:**

3. **Վճարելու ժամանակ չտեսնող անձն անձամբ կհանի գումարը, բայց կարող է առաջարկել, որ Դուք վճարեք իր փոխարեն՝ տալով գումարը Ձեզ:**

4. **Եթե չտեսնողը բարձրաձայն չի նշում գումարի չափը, Դուք բարձրաձայնեք դրա մասին՝ ասելով. «Դուք ինձ տվել եք, օրինակ, 5 հազար դրամ»:**

5. **Մանրը վերադարձնելու ժամանակ անհրաժեշտ է գումարը հանձնել նրան՝ ասելով, թե որը ինչ թղթադրամ կամ մետաղադրամ է:**

Վերջում խնդրում ենք հիշել, որ տեսողության խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անձ անհատականություն է և չկան երկու միմյանց նման և միանման հնարավորություններ ունեցող անձինք:

Հեղինակներ՝ Սիփան Ասատրյան
Վահան Դիշլանյան

coalition.cilr@gmail.com
+374 94043142

Web

Facebook